

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՅ ՀՆՁՈՒՅԹԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Թիե հնչույթի գաղափարի առաջադրումը վերագրվում է նոր ժամանակներին և համարվում արդի լեզվաբանության կարևոր նվաճումներից մեկը, բայց նրա սաղմերը հանդես են եկել շատ վաղ ժամանակներում և գործնական արտացոլում գտել այբուբենների ստեղծման մեջ¹։ Բացառություն չի կազմում նաև հայ իրականությունը, որտեղ ոչ միայն հնչույթների տարբերակման ճիշտ սկզբունքների ու մեթոդների կիրառումը ակնհայտորեն դրսևորվել է հայերենի այբուբենի ստեղծման, մեջ² մի այբուբեն, որ հետագոյնների գրեթե միահամուռ կարծիքով, եղել է խոր ժամանակի համար ամենակատարյալ հնչյունական (հնչույթային—Գ. Զ.) գրությունը³, այլև Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանության մեջ և նրա մեկնություններում տեղ են գտել սկզբունքներ ու մտքեր, որոնք խոսում են հնչույթի ըմբռնման որոշակի սաղմերի և դասակարգման ավելի առաջավոր սկզբունքների կիրառման մասին³։ Նախ՝ մարդկային ձայնի էական հատկանիշ է համարվում հոդավորությունը, այսինքն հստակ կերպով մասնատվելու, ձայնավորների ու բաղաձայնների բաժանվելու կարողությունը։ Նրկորդ⁴ հստակորեն տարբերվում են «գիր» և «տառ» հասկացությունները, առաջինը համարվում է երկրորդի գրավոր պատկերը. այս երկու հասկացությունների խառնումը տեղի է ունենում շատ ուշ։ Նրկորդ⁴ քանի որ «տառ» բառը «տարր» բառի կրկնակն է, ուստի տառերին որպես ձայնի տարրերի վերագրվում է իմաստատարերիչ արժեք. տառերի տարբեր դասավորությունը (այլ և յալ) և մի տառի փոխարինումը մյուսով (հմմտ. լծորդ տառերի ուսմունքը) կարող են հանգեցնել նոր բառերի առաջացման։ Չորրորդ⁴ ուշադրություն է դարձվում տարբեր լեզուների այբուբենների կազմի և, համապատասխանաբար, «տառերի» քանակի տարբերությանը։ Հինգերորդ⁴ մտցվում է «տառերի» դասակարգման նոր ըսկզբունք⁴։ Հույների գործառական դասակարգման փոխարեն (ըստ վանկի և բառի մեջ խաղացած դերի ու գրաված դիրքի) առաջին պլանն է մղվում արտասանական տարբերության վրա հիմնված դասակարգումը։

«Հնչույթ» (ֆոնեմա) տերմինը արդի լեզվաբանության մեջ մուտք է գործել XIX դ. 70-ական թվականներից, ընդ որում հետագայում նրա փոխարեն առաջարկվել են նաև այլ տերմիններ։ «Հնչույթ» բառի գործածությունն էլ որպես «հնչյուն» բառից տարբեր լեզվական էության նշանակման, սկսվել է մոտավորապես նույն ժամանակներից, և հատկապես Ի. Ի. Բոդունեն դե Կուրտենների ու Վ. Կրուշևսկու աշխատություններից հետո հնչույթը ձեռք է բերել ինքնուրույն լեզվաբանական միավոր դիտվելու իրավունք։ Հնչույթի լեզվաբանական տարբեր ուղղություններում և տարբեր լեզվաբանների աշխատություններում հանդես եկող այլևայլ ըմբռնումների խմբավորումը հեշտ չէ, եթե նկատի ունենանք դրանց արտակարգ մեծ քանակը, բայց մեր կարծիքով դրանք կարելի է հանգեցնել երկու հիմնական հարցերի տրվող տարբեր պատասխանների. 1) հնչույթների առանձնացման համար հիմք պետք է ընդունել

1 Հմմտ. Գ. В. Воронкова, Проблемы фонологии, Л., 1981, с. 6—9.

2 Վ. Лоукотка, Развитие письма, М., 1950, с. 157.

3 Հմմտ. Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 62—67, 70—72, 127—133, 163—165 և այլն։

լեզվակա՞ն, թե՞ արտալեզվական շափանիշները, այլ կերպ ասած՝ առաջին պլանն պետք է մղվեն դրանց ունեցած «գործառական» (վանկի և ձևույթի ու բառի մեջ գրաված դիրքի ու խաղացած դերի հետ կապված), թե՞ ֆիզիկական-ֆիզիոլոգիական տարբերությունները. ըստ այսմ տարբերվում են ա) ֆիզիկական-ֆիզիոլոգիական, բ) գործառական, գ) ֆիզիոլոգիական-գործառական և դ) գործառական-ֆիզիոլոգիական հայեցակետերը: 2) հնչույթները պետք է դիտել որպես նյութական-ֆիզիկական, թե՞ որպես իդեալական-հոգեկան-գիտակցական էություններ (անհատական-հոգեկան պատկերացումներ, ընդհանուր-հասարակական հասկացություններ, կոնստրուկտներ). ըստ այսմ տարբերվում են ա) ֆիզիկական, բ) կոնցեպտուալ (հոգեբանական, հասկացական), գ) ֆիզիկականի ու հոգեկանի որպես առանձին ու ընդհանուր դիալեկտական փոխհարաբերության վրա հենվող և դ) հոգեկանի ու ֆիզիկականի որպես հասկացական ու դիտողական աստիճանների որոշակի հակադրությունից ելնող (երկաստիճանային) հայեցակետեր:

Հայ իրականության մեջ հնչույթի (ֆոնեմայի) գաղափարը, դրա նոր մեկնաբանությամբ հանդերձ, մուտք է գործել 1930-ական թվականներից՝ նախ Գ. Ղափանցյանի, ապա Գ. Սևակի աշխատություններով⁴ Գ. Ղափանցյանն օգտագործում է «ֆոնեմա» տերմինը և զուգակցում հնչույթի ըմբռնման հասարակական և հոգեբանական հայեցակետերը. հնչույթը նա համարում է հնչյուն, որ «կազմում է լեզվի հասարակական գիտակցման անհրաժեշտ և նշանակելի տարր և մեր հոգեկանության մեջ մի ամբողջություն, այսինքն՝ որպիսիով մենք ունենք նրա ամբողջական պարտադիր պատկերացումը—հիշողությունը»⁵: Գ. Սևակը «ֆոնեման» թարգմանում է «հնչույթ» և այն սահմանում որպես «հանրորեն գիտակցված և արժեքավորված յուրաքանչյուր հնչյունական հասկացություն»⁶:

Կարելի է ասել, որ հնչույթի այս ըմբռնումը, որպես հասարակայնորեն գիտակցված ու արժեքավորված հնչյունական հասկացություն կամ, ըստ այլ կարծիքների, հնչյունական նվազագույն միավորի (հնչյունի), տեղ է գտնում հայ լեզվաբանների գրեթե բոլոր աշխատություններում՝ նվիրված լինեն դրանք ընդհանուր լեզվաբանությանը թե հայերենին, նկատի ունենան բուն հնչական կողմը թե ողջ կառուցվածքը: Իհարկե, այս բոլոր դեպքերում առկա է բնական ձգտում՝ հենվելու լեզվաբանության մեջ տարածվող նոր մեթոդների և սկզբունքների վրա, օգտագործելու այն նորը, որ հանդես է գալիս ուրիշ լեզուների, մասնավորապես ռուսերենի և անգլերենի ուսումնասիրության մեջ: Սրա հետ միասին միտում է նկատվում լեզվաբանության, այդ թվում նաև հնչաբանության հարցերի ուսումնասիրության մեջ փոփոխություններ, որոնք տեղի են ունենում սեփական խոսք, առաջ անցնելու տեսական հարցերի մեկնաբանության մեջ, կատարելագործելու լեզվի ուսումնասիրության եղած մեթոդները, առաջ քաշելու նոր սկզբունքներ և նոր պրոբլեմներ, առաջարկելու պրոբլեմների նոր լուծումներ: Այդպիսի միտումի մի դրսևորումն է լեզվական կաղապարման և փոխկաղապարման այն ուսմունքը, որ մեր կողմից մշակվել և հասարակության ուշադրության է ներկայացվել 1960-ական թվականների վերջերից: Այդ ուսմունքը դեռևս չի ստացել իր ամբողջական կերպարանքը, չի մշակվել իր բոլոր մանրամասներով, բայց հիմնական գծերով շարադրված է մեր մի շարք աշխատություններում⁷: Այստեղ զգալի տեղ են գրավում նաև հնչաբանության և հայերենի հնչակառուցվածքի ուսումնասիրության հարցերը: Ներկա հոգվածում մենք կփորձենք ամենաընդհանուր ձևով ներկայացնելու կաղապարման այդ ուսմունքի հիմնական սկզբունքները հնչույթի տեսության

4 Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1937, 2-րդ լրացված հրատ., 1939. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939:

5 Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., 1939, էջ 43:

6 Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 92:

7 Հմմտ. հատկապես մեր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (Երևան, 1974) և «Общее и армянское языкознание» (Երևան, 1978) գրքերը:

բնագավառում և որոշ եզրակացություններ անելու հայերենի վերաբերյալ: Առանց այդ սկզբունքների խմաստավորման և հետևողական կիրառման՝ հայերենի (և ոչ միայն հայերենի) հնչաբանությունը չի կարող գերծ մնալ տեսական տարրնթացությունից ու էկլեկտիզմից, չի կարող հանդես գալ միասնական տեսական հիմքով:

Հետագա քննության մեջ երկվությունից խուսափելու համար մենք հարկ ենք համարում անելու տերմինային մի ճշգրտում: Քանի որ մեզ հարկավոր է ունենալ մի այնպիսի տերմին, որ ընդհանուր բնույթ ունենա, արտահայտի հնչական կողմի նվազագույն միավորն ընդհանրապես, ուստի և մենք պիտի որոշակի ընտրություն ու վերապահում կատարենք: «Հնչյուն» բառը թեև զուրկ է ռուսերեն ՅВУХ բառի երկվությունից, որ նշանակում է ընդհանրապես հնչյունը և հնչման առանձին տարրը՝ հնչյունը, բայց ունի մի այլ թերություն, որ հատուկ է նաև ռուսերեն ՅВУХ բառի գործածությանը: Այն գործածվում է մի կողմից՝ մեր նշած իմաստով, որպես հնչանշանների նվազագույն միավորի, մյուս կողմից՝ որպես հնչույթի անհատական խոսքային իրացման նշանակում: Ստույգ մենք «հնչյուն» բառը կգործածենք առաջին՝ ընդհանուր իմաստով, երկրորդ իմաստի դեպքում դիմելով համապատասխան տարբերակման՝ «խոսքի հնչյուն» տերմինին:

1. Կաղապարման մեր ուսմունքը խստորեն տարբերում է լեզվի ուսումնասիրության ընդհանուր լեզվաբանական հայեցակետը առանձնականից, սրանցից յուրաքանչյուրի մեջ էլ՝ անփոփոխակայինը՝ փոփոխակայինից: Ընդհանուր լեզվաբանության մեջ համապատասխանաբար առանձնացվում են ընդհանրական լեզվաբանական կաղապարի ուսմունքը որպես անփոփոխակային և, համաժամանակյա մոտեցման դեպքում, ընդհանուր լեզվաբանական տիպաբանությունը որպես փոփոխակային հայեցակետի դրսևորում: Ընդհանրական լեզվական կաղապարը, ի տարբերություն առանձնալեզվական կաղապարների, իդեալական կառույց է, որի մեջ տրվում են բոլոր լեզուների համար կիրառելի հատկանիշներ, կարգեր (կատեգորիաներ) և եզրեր (տերմին՝ կարգերի անվերլուծելի և անբաժանելի բաղադրիչներ): Այս մոտեցմամբ՝ եթե մենք պարզում ենք, թե ինչպե՞ս են ընդհանրական կաղապարով որոշվող իմաստները (բովանդակության պլանի բաղադրիչները) միանում այդ նույն կաղապարով որոշվող հնչյունների (կամ արտահայտության պլանի այլ բաղադրիչների) հետ, ապա անցնում ենք տիպաբանական և առանձնալեզվական հայեցակետերին, այսինքն՝ պարզում ենք ընդհանուր հնարավորությունների իրացման որոշակի տիպերը և պայմանները: Հասկանալի է, որ այս մոտեցման դեպքում հնչույթների, որպես լեզվական տարբեր հանրությունների մեջ ընտրվող տարբերակիչ հատկանիշներով, կարգերով ու եղրերով որոշվող միավորների, ընդհանուր քննությունը (հնչույթաբանության ընդհանուր ուսմունքը) կպատկանի ընդհանուր լեզվաբանական տիպաբանությանը, հնչույթային կոնկրետ համակարգերի ուսումնասիրությունը՝ առանձնական լեզվաբանություններին: Այլ կերպ ասած՝ ընդհանուր հնչույթաբանությունը ընդհանուր անփոփոխակային լեզվաբանության (ընդհանուր լեզվաբանական տիպաբանության), իսկ այս կամ այն կոնկրետ լեզվի հնչույթաբանությունը՝ առանձնական անփոփոխակային լեզվաբանության բաժինն է: Եթե ընդհանուր լեզվաբանության ընդհանրական կաղապարի մեջ սահմանվում են բոլոր հնարավոր տարբերակիչ հատկանիշները, բոլոր հնարավոր կարգերն ու եզրերը, որոնցով կարող են տարբերվել իրարից մարդկային հնչյուններն ընդհանրապես, իսկ ընդհանուր տիպաբանության մեջ պարզվում տարբեր լեզուների հնչույթային համակարգերի տիպերը, լեզուները դասակարգվում ըստ այդ տիպերի, ըստ ընդհանրական լեզվական կաղապարի առանձնալեզվական իրացումների, ապա առանձին լեզուների քննության մեջ տրոշվում են, թե այդ հնարավոր հատկանիշներից, կարգերից ու եզրերից տրո՞նք են ընտրվում որպես էական (ռեկանտ): Մարդկային լեզվում տարբերակվող հնչյուններն ընդհանրապես մենք նպատակահարմար ենք համարում կոչել համայնահնչյուններ (պամֆոնաններ կամ պամֆոնեմաններ), առանձին լեզվական կոլեկտիվներում դրանցից ընտրվող հնչ-

յշտունները՝ հանրահնչյուններ (սոցիոֆոնաններ)։ Վերջիններս համապատասխանում են հենց հնչույթներին, և այսպիսով, հանրահնչյուն տերմինի հետ միասին մենք հավասարապես գործածում ենք նկնույթ տերմինը։ Ըստ առաջին հարցին մեր տված պատասխանի՝ հնչույթները ոչ այլ ինչ են, և թե ոչ այս կամ այն լեզվական հանրության մեջ ընտրված տարբերակիչ հատկանիշներով, կարգերով ու եզրերով ընտրվող (հակադրվող) նվազագույն հնչամիավորներ (հնչյուններ), որոնց ամբողջությունը կազմում է տվյալ լեզվի հնչույթների համակարգը։ Հայտնի տվյալներով՝ գոյություն ունեցող լեզուներում դրանց քանակային կազմը ընկած է նվազագույն 13 և առավելագույն 81 թվերի միջև, ընդ որում ամենից ավելի տարածված են երկուսից մինչև հինգ տասնյակ հնչույթներ ունեցող տիպերը։

2. Կադապարման մեր ուսմունքը, ի տարբերություն կառուցվածքային լեզվաբանության, հետևողականորեն անցկացնում է լեզվական քննության սուբստանցիական (սուբստանցիոնալ) հայեցակետը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ հետևողական մատերիալիստական հայեցակետի կիրառում։ Ելնելով այս հայեցակետից, այլև, որոշ առումով, հենվելով Գյոդելի հայտնի թեորեմի վրա (ամեն մի բավականաչափ բովանդակալից ձևական համակարգի մեջ անլուծելի պրոբլեմների առկայություն մասին)՝ այդ ուսմունքը դրսևում է, որ լեզուն չի կարելի հասկանալ և բացատրել, եթե որևէ դրսևում ենք որպես ինքնակալառուցվածք, դուրս չենք գալիս նրա սահմաններից, նկատի չենք առնում, որ լեզուն ստեղծվել է մարդկային տվյալ հանրության անդամների հաղորդակցման կարիքներն սպասարկելու համար և որ, հետևաբար, նրա նկատմամբ կիրառելի են ընդհանուր փիլիսոփայական-տրամաբանական կարգերը (կատեգորիաներ)։ Մարդկային լեզուն ուսումնասիրողը ոչ միայն ընդհանրացնում է ստանձին լեզուների տվյալները, դիմում մակածության (ինդուկցիայի), այլև, դավանելով աշխարհի միասնականության սկզբունքը, ելնում է փիլիսոփայական-տրամաբանական ընդհանուր սկզբունքներից ու կարգերից (կատեգորիաներից), դրանցից արտածման (դեդուկցիայի) ուղիով բացատրում լեզվականը։ Ընդհանուր լեզվաբանական տեսությունը պետք է կառուցվի մակածության և արտածության համաչափ դուգակցմամբ, ըստ ընդհանուր մոտեցման՝ ինի հիպոթետիկ-արտածական։

Շարադրված սկզբունքը հատկապես լավ է դրսևորվում և վազուց ի վեր կիրառվում հնչաբանության մեջ՝ ի տարբերություն լեզվաբանության մյուս բնագավառների, շնորհիվ նրա արտալեզվական հիմքի սահմանափակության և նկարագրման հեշտության, թեև առանց ընդհանուր սկզբունքի դիրքերից իմաստավորվելու։ Քանի որ մարդկային լեզվի մեջ գործածվող հնչյունները վերջին հաշվով ֆիզիկական կազմավորումներ են, և քանի որ նրանց տարբերությունների ու ընդհանրությունների ձևալորման աղբյուրը մարդու արտասանական ապարատն է, ապա ակնհայտ է, որ քննությունը պետք է սկսել սուբստանցիային հիմքից՝ հնչյունների կազմավորման ֆիզիկական և ֆիզիոլոգիական ընդհանուր պայմանների քննարկումից։ Այլ կերպ ասած՝ առանձին լեզուների նորմայով առանձնացվող հնչյունների՝ հնչույթների, բնույթը, տարբերություններն ու ընդհանրությունները, նրանց քանակային կազմը և համակարգային հակադրությունները հասկանալու և բացատրելու համար հարկավոր է դուրս գալ բուն լեզվի սահմաններից, դիմել ֆիզիկական և ֆիզիոլոգիական տվյալներին։ Այս դեպքում էլ պետք է նկատի առնել հետևյալը։

Նախ՝ առանձին լեզուների հնչույթների աղբյուրը արտասանական ապարատն է, և լեզվաբանական առումով ու ուսուցման նպատակներից ելնելով տվյալ լեզվի հնչույթների համակարգի նկարագրությանը պիտի նախորդի նրանց կազմավորման ֆիզիոլոգիական պայմանների նկարագրությունը, իսկ ֆիզիկական բնույթի ու տարբերությունների որոշումը օժանդակ բնույթ պիտի ունենա այդ ֆիզիոլոգիականի համար. այլ կերպ ասած՝ ֆիզիկական, ֆիզիոլոգիական և առանձնալեզվական հայեցակետերը մեր կողմից ոչ թե դրվում են իրար կողքի, այլ կապվում յուրառեսակ ստորադասական հարաբերությամբ. ֆիզիկական բնույթը պիտի պարզի ամենաընդհանուր հնարավոր-

րությունները, ֆիզիոլոգիական քննությունը՝ մարդու արտասանական ապարատի միջոցով այդ հնարավորությունների մասնակի իրականացման պայմանները՝ առանձին լեզուների համար ունեցած հնարավորությունների որոշմամբ, լեզվականը կամ, ավելի ճիշտ, առանձնալեզվականը՝ այդ հնարավորությունների իրացումները առանձին լեզուների սահմաններում:

Երկրորդ՝ ֆիզիկական և ֆիզիոլոգիական հայեցակետերը այս դեպքում լեզվական արժեք են ստանում ոչ միայն այն պատճառով, որ նախատեսված են լեզվականը բացատրելու համար, այլև, հատկապես ֆիզիոլոգիականի դեպքում, այն պատճառով, որ մարդու արտասանական ապարատի ձևավորումը կապված է մարդկային լեզվի ձևավորման պրոցեսի հետ և հասարակական արժեք է ստացել, ինչ ավելին. հայտնի է, որ բացի ֆիզիոլոգիական-արտաբերական հայեցակետից գոյություն ունի ֆիզիոլոգիական-լսողական հայեցակետը, որի մեջ հատկապես ցայտուն կերպով է հանդես գալիս ֆիզիոլոգիականի հասարակական արժեքը. հնչույթի հասարակական կողմը, տվյալ հասարակական-հաղորդակցական կոլեկտիվում նրա առանձնացումը հանդես է գալիս առաջին հերթին այդ կոլեկտիվի անդամների կողմից նրա տարբերակած ընկալման (որպես առանձին հնչույթ լավելու) մեջ: Այլ կերպ ասած՝ հնչույթի մեջ ֆիզիկական-ֆիզիոլոգիականի հետ միասին և նույնիսկ նրանց միջոցով դրսևորվում է հասարակական-լեզվականը:

Երրորդ՝ հնչույթների քննության գույտ գործառական սկզբունքը, եթե այն չի լրացվում ֆիզիոլոգիապարման տվյալներով, չի կարող լիովին արդյունավետ լինել: Գործառական քննությունը, որ հիմք է ընդունում հնչյունի գործառությունը ավելի բարձր կարգի միավորների մեջ՝ ոչ միայն վանկի, այլև իմաստակիր այնպիսի միավորների կազմում, ինչպիսիք են ձևույթն և բառը, կարող է հասնել հնչույթների առանձնացման, բայց չի կարող մինչև վերջ բացատրել նրանց էությունը, նրանց տարբերությունների բնույթը:

Չորրորդ՝ հենց սկզբից հիմք ընդունելով «հնչուն» բառը որպես ընդհանուր նշանակում՝ մենք պարզեցինք նաև մեր վերաբերմունքը հնչույթաբանական տարբեր ուղղությունների առանձնացման հիմքում ընկած երկրորդ հարցի հանդեպ: Քանի որ մենք հնչույթը սահմանեցինք որպես հնչյուն, որ իբրև այդպիսին է ընկալվում տվյալ լեզվական հանրության մեջ գործող նորմայով, ուստի և կանգնեցինք այն տեսակետի վրա, որ հնչույթի էությունը հասկանալու համար պետք է հլնել նրա նյութական-ֆիզիկական (սուբստանցային) բնույթից, բայց միաժամանակ նկատի առնել, որ այդ նյութականը ստանում է ընդհանուր հասարակական արժեք, հենց որ խոսվում է հասարակության (տվյալ լեզվական հանրության) բոլոր անդամների կողմից իբրև միևնույնը ընկալվելու և դրանով իսկ մյուս հնչույթներին հակադրվելու մասին: Եվ իբրեք, «հնչուն» բառը ինքնին նշանակում է նյութական էություն՝ առաձգական միջավայրի տատանողական շարժում, բայց միաժամանակ այն նշանակում է այն զգայությունը (ընկալումը, տպավորությունը), որ այդ տատանողական շարժումը գործում է մեր լսողական օրգանների վրա. պատահական չէ, որ լեզվի բառերի թեմատիկ խմբերի առանձնացման ժամանակ ձայնը, գույնը և այլն ունենք դնում են ֆիզիկական երևույթների, մյուսները՝ զգայական ընկալումների խմբերի մեջ: Միաժամանակ, այն հանգամանքը, որ տվյալ լեզվական հանրության մեջ իբրև տարբերակիչ հատկանիշներ ընկալվում են հնչույթի այսինչ կամ այնինչ ֆիզիկա-ֆիզիոլոգիական (նյութական) հատկությունները, և որ դրանք պատմականորեն փոխվում են, խոսում է ոչ միայն հնչույթի առանձնացման նյութական հիմքի, այլև նրա հասարակական-պատմական էության մասին:

3. Կադապարման մեր ուսմունքը «լեզվի լեզվաբանություն» և «խոսքի լեզվաբանություն» սոսյուրյան տարբերակման փոխարեն, որ երկրորդ մասով այդպես էլ չիրականացավ, առաջ է քաշում «անփոփոխական լեզվաբանություն» և «փոփոխական լեզվաբանություն» տարբերակումը՝ այն կիրառելով լեզվաբանական ընդհանրացման բոլոր աստիճանների նկատմամբ: Մենք տեսանք, որ ընդհանուր լեզվաբանության մեջ այն դրսևորվում էր որպես ընդ-

հանրական լեզվական կադապարի և ընդհանուր լեզվաբանական տիպաբանության տարբերակում: Առանձնական լեզվաբանության մեջ այն դրսևորվում է որպես ստանդարտ (գրական) լեզվի նորմավորված ձևի և նրա ոճական տարբերակների ուսումնասիրություն, այսինքն՝ ստանդարտ (գրական) լեզվի նկարագրություն (աքերականություն)՝ այդ բառի լայն առումով) և ոճաբանություն: Մասնավորելով մեր խոսքը հնչույթի նկատմամբ՝ կարող ենք ասել, որ այս դեպքում մենք կունենանք ստանդարտ (գրական)՝ նորմավորված լեզվի հնչույթների համակարգի, երկրորդ դեպքում՝ դրանց հասարակական-ոճական և, որոշ վերապահությամբ, անհատական տարբերակների ուսումնասիրություն: Ընդհանրապես հնչույթները կարող են ունենալ 1) շարակարգային (դիրքային), 2) հասարակական-ոճական, 3) բարբառային և 4) անհատական տարբերակներ: Սրանցից շարակարգային (դիրքային) տարբերակների ուսումնասիրությունը, որքանով որ այդ տարբերակները հանդես են գալիս նորմավորված լեզվի կառուցվածքում, կազմում է տվյալ լեզվի բուն նկարագրության առաջնական. բարբառային տարբերակների ուսումնասիրությունը մտնում է բարբառագիտության նպատակների մեջ և ստանդարտ (գրական) լեզվի ուսումնասիրությանը կարող է վերաբերել այն չափով, որչափով մտնում է լեզվի հասարակական-ոճական տարբերությունների՝ բուն ոճաբանության մեջ: Առանձնական փոփոխական լեզվաբանության բուն առարկան, այսպիսով, կկազմեն հենց այս՝ հասարակական-ոճական տարբերությունները: Խոսելով լեզվի անհատական տարբերակների մասին՝ մենք այս դեպքում էլ նրկատի ենք առնում ոչ թե խոսքային, այլ անհատալեզվական տարբերությունները, որոնք կոնկրետ արտահայտություն են գտնում լեզվի մեջ:


Կադապարման մեր ուսմունքը առաջ է քաշում լեզվի և խոսքի փոխհարաբերության նոր ըմբռնում:

Ամենից առաջ՝ մենք գտնում ենք, որ խոսքը որպես լեզվի անհատական դրսևորում չի կարող լեզվաբանական ուսումնասիրության հատուկ նպատակ լինել: Են ուսումնասիրվում է լեզվի բացահայտման նպատակով:

Երկրորդ՝ ի տարբերություն թե՛ Սոսյուրի և թե՛ հնչույթի ու հնչյունի տարբերությունը լեզու-խոսք տարբերությամբ մեկնաբանող Տրուբեցկոյի՝ մենք լեզվի, որպես տվյալ հանրության ունեցվածքի, և խոսքի, որպես լեզվի անհատական դրսևորման միջև դնում ենք անհատի լեզուն. լեզուն որպես հասարակական երևույթ հակադրվում է խոսքին ոչ թե անմիջաբար, այլ անհատի լեզվի միջոցով. այստեղից բխում է, որ հնչույթը որպես հասարակական երևույթ հակադրվում է խոսքի մեջ հանդես եկող հնչյունին անհատի լեզվին հատուկ համապատասխան միավորի միջնորդությամբ. այլ կերպ ասած՝ հնչույթի և խոսքային հնչյունի միջև ընկած է հնչույթի անհատական տարբերակը, նշանակում է՝ ճիշտ չեն այն լեզվաբանները, որոնք լիովին մի կողմ թողնելով հնչույթի անհատական-հոգեբանական մեկնաբանությունը, հնչույթը որպես հասարակական երևույթ անմիջապես հարաբերում են խոսքային հնչյունին և այսպիսի հարաբերումը դիտում որպես բուն լեզվական մոտեցում:

Այսպիսով, մենք տարբերում ենք՝ 1) հնչյունը որպես մարդկային հնչական լեզվի նվազագույն բաղադրիչ, որ պայմանականորեն կոչել ենք համայնահնչյուն (патофон), 2) հնչյունը որպես լեզվական տվյալ հանրության մեջ տարբերակվող միավոր՝ հանրահնչյուն (сообщон) կամ, ինչպես ընդունված է ասել, հնչույթ, 3) հնչյունը որպես լեզվական տվյալ հանրության անհամայնական մեջ հնչույթի դրսևորում՝ անհատահնչյուն՝ համապատասխան հոգեբանական-ֆիզիոլոգիական հիմքով, որ հնարավոր է դարձնում անհատի կողմից խոսքային բոլոր տարբերակները արտասանել և ընկալել որպես միևնույն հնչյունը, 4) հնչյունը որպես խոսքի տարր, որ անհատի լեզվի տարբեր իրացումներում տարբեր բնույթ ունի: Այս փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ սխեմայով.

Այստեղից բնականաբար բխում է, որ «հնչյուն» բառը, որպես հնչանըշանների նվազագույն միավորի նշանակում, կարող է գործածվել բոլոր շորս



իմաստով, և որ խոսելով սովոր լեզվի հնչյունների մասին հասկացել և հասկանում են հնչույթները:

Երրորդ՝ խոսքը առնչելով անհատի լեզվի, որպես հասարակության լեզվի անհատական իրացման հետ, մենք այդ երկուսը չենք դնում իրար կողք-կողքի, այլ կապում մշտական գործուն փոխհարաբերությամբ. լեզուն խոսքի նախադրյալն է և հետևանքը, խոսքը՝ լեզվի իրացումը և ինքնահաստատումը: Անհատի լեզուն և անհատի խոսքը կապված են հնարավորության և իրականացման փոխներթափանցող և փոխալսմանավորող հարաբերությամբ: Այսպիսին պետք է համարել նաև հնչույթի անհատական դրսևորման և խոսքի մեջ նրա իրացման փոխհարաբերությունը, որով պետք է զբաղվի ոչ թե խոսքի լեզվաբանությունը, այլ փոփոխական լեզվաբանությունն այն մասով, որ զբաղվում է լեզվական անփոփոխականների իրացման, վերջին հաշվով՝ դրանց փոփոխական պայմաններով ու սահմաններով: Այստեղ, բնականաբար, հատուկ տեղ է տրվում հնչույթի հոգեբանական քննությանը:

4. Կադապարման մեր ուսմունքը ելնում է այն գաղափարից, որ ընդհանրական լեզվական կադապարը պետք է կիրառելի լինի ոչ միայն բոլոր լեզուների (ընդհանրականության կամ տնիվերսալիզմի սկզբունք), այլև միևնույն լեզվի բոլոր կողմերի նկատմամբ (ամբողջականության կամ ինտեգրալության սկզբունք), ընդ որում բոլոր դեպքերում պետք է գործեն վերլուծության և համադրության միևնույն եղանակները (միասնության կամ մոնիզմի սկզբունք): Բնականաբար, այս սկզբունքներից բացառություն չի կազմում նաև լեզվի հնչական կողմի ուսումնասիրությունը: Եվ իրոք. ինչո՞ւ են ֆիզիկապես, ֆիզիոլոգիապես և գործառուպես իրարից տարբերվում մարդկային լեզվի հնչյունները, եթե ոչ ընդհանրական լեզվական կադապարի բացահայտած այնպիսի կարգերով, ինչպիսիք են տեղը, չափը, ձևը, քանակը, կարգը, տևողությունը, հաճախականությունը և այլն՝ դրանց մեջ առանձնացվող հիմնական, հակադիր, միջին, համատեղական (փոխադարձ), անդադարձ և չեզոք եզրերով: Այս ուղղությամբ աշխատանքը նոր է սկսվում, և հայ լեզվաբան-հնչաբանների խնդիրներից մեկը պետք է լինի ընդհանրական լեզվական կադապարի հետեղական կիրառումը, լեզվական նկարագրության միասնական սկզբունքների և միասնական տերմինների հաստատումը, Հայերենի հնչույթների նկարագրության արդի վիճակի ամենաթուցիկ քննությունն անգամ բացահայտում է նկարագրության սկզբունքների բացարձակ անմիօրինակություն. գրանը ոչ միայն չեն համապատասխանեցվում լեզվի ուսումնասիրության այլ բաժիններում կիրառվող սկզբունքներին, այլև հենց ինքնին առնված գուրկ են միասնականությունից: Նրանց անվանումների մեջ արտացոլվել են հնչյունների դասակարգման բնագավառում գիտության անցած տարբեր փուլերի պատկերացումներն ու տերմինները: Հայ հնչաբանական գրականության մեջ գործող անվանումների մի մասը տրվում է ըստ ֆիզիկական-ակուստիկական հատկանիշների (ալվիկալոր, ձայնավոր, ձայնորդ, ձայնեղ), երկրորդ մասը՝ ըստ կազմավորման ֆիզիոլոգիական-արտաբերական պայմանների (սովորաբար առանց ակտիվ և պասսիվ օրգանների հստակ տարբերակման՝ ռեզային, լեզվային, շրթնային, շրթնաառամնային, առամնային, փային, կառկային և այլն), երրորդ մասը՝ ըստ հնչյունների թողած տպավորության (փափուկ, կոշտ, սուլական, շշական և այլն), չորրորդ մասը՝ ըստ ավանդույթի՝ առանց գիտական որոշակի հիմնավորման (նայ, կրկնակ և այլն): Հնչյունների միևնույն կարգը երբեմն բնութագրվում է բոլորովին տարբեր անվանումներով,

ընդ որում գիտականորեն հիմնավորված անվանումների կողքին հանդես են գալիս շփոթանվորված և նույնիսկ սխալ անվանումներ: Այսպես ձ, ծ, ց, ջ, ճ, շ հնչյունների համար Գ. Ղափանցյանից սկսած գործածվում է «ուլայթաշփական» անվանումը, թեև հայտնի է, որ այս բաղաձայնների կազմավորման ժամանակ տեղի է ունենում հպումից անցում նեղվածքի՝ առանց պայթականների համար բնորոշ պայթյունի փուլի. ավելի ճիշտ կլիներ նպատեղվածալի՞ն կամ հպաշփական անվանումը:

Մեկ հոգվածի սահմաններում հնարավոր չէ գծել հնչյունների նկարագրության մեր կողմից առաջարկվող բոլոր սկզբունքները, ուստի և կխոսենք միայն մի քանի էական հարցերի մասին:

ա) Հնչյունների (հնչույթների) նկարագրության ֆիզիկական-ակուստիկական և արտաբերական-ֆիզիոլոգիական սկզբունքներից լեզվի նկարագրության և ուսուցման համար ավելի կարևոր է երկրորդը, ընդ որում ըստ մեր հաստատած ստորադասական հարաբերության ֆիզիկական-ակուստիկականը կապվում է լեզվականի հետ արտաբերական-ֆիզիոլոգիականի միջնորդությամբ:

բ) Ընդհանրական լեզվաբանական կաղապարը ունենալով կարգերի (կատեգորիաների) և եղրերի (տերմերի) մշակված համակարգ, հստակորեն տարբերակելով միավորները, կարգերը, եզրերը, հատկանիշները, հարաբերությունները, որոշելով դրանց ներքին կապն ու փոխհարաբերությունը՝ հնարավորություն է տալիս նախ՝ իուլսափելու նկարագրության երկվությունից ու անորոշությունից, հստակորեն տարբերակելու երևույթները, երկրորդ՝ հավասար հաջորդությամբ իրագործելու ինչպես հնչյունների վերլուծության, այնպես էլ համադրության («սերման») սկզբունքները:

գ) Ամենաթուզիկ դիտողությունն իսկ պարզում է որոշակի զուգահեռություն հնչյունի նկարագրության օգտագործվող գաղափարների ու տերմինների և նախադասության անդամների բնույթի ու անվանումների միջև. հմտ., օրինակ, «արտաբերության անդամները և «ափողի պարագա»: Առաջ տանելով այս անալոգիան՝ կաղապարման մեր ուսմունքը ձևավորում է, որ որակական տարբերություն չկա հնչյունի և արտալեզվական կամ լեզվական որևէ օբյեկտի նկարագրության սկզբունքների ու եղանակների միջև: Որևէ առարկայի, երևույթի, միավորի նկարագրության դեպքում այն (օրինակ՝ տվյալ դեպքում հնչյունը) կարող է դիտվել որպես յուրատեսակ ենթակա, որին որպես նախադասության կենտրոնի, հետևողականորեն վերագրվում են տրոշակի արժեքներ, — տվյալ դեպքում՝ ընդհանրական, կաղապարի կարգերը, — ըստ ֆունկցիոնալ $y=f(x)$ հարաբերության: Այդ հարաբերությունը կարելի է պատկերացնել նաև յուրատեսակ նախադասության ձևով, որի մեջ երկրորդ մասում տրված են ընդհանրական կաղապարի կարգերը որպես ստորոգելի՝ լրացնող նախադասության անդամներ՝ շարակարգային հաջորդականությամբ և եզրերը՝ որպես այդ կարգերի հարացուցային իրացումներ: Եթե կարգերի և նրանց եզրերի տեղերը դիտենք որպես բջիջներ, ապա ողջ պրոցեսը կհանգի այդ բջիջների լրացմանը: Ելնելով ամբողջականության և միասնության սկզբունքներից՝ կարելի է ասել, որ այդպիսի կաղապարներ կարելի է կառուցել նաև հնչյունի՝ որպես յուրատեսակ ենթակայի համար և՛ ֆիզիկական, և՛ ֆիզիոլոգիական, և՛ լեզվա-գործառական հայեցակետերով. միայն թե ընդհանրական ֆիզիկական մոտեցման դեպքում առկա կլինի իդեալական ընդհանուր կաղապար՝ բոլոր բջիջների լրացմամբ, ֆիզիոլոգիականի դեպքում՝ իդեալական մասնակի կաղապար՝ բջիջների միայն մի մասի լրացմամբ՝ ըստ արտասանական ապարատի հնարավորությունների: Եթե մենք ընդհանրականից անցնենք որևէ առանձին լեզվի, տվյալ դեպքում՝ հայերենին, ապա ֆիզիկական և ֆիզիոլոգիական կաղապարները կներկայացվեն թերի կերպով՝ միայն այն բջիջների լրացմամբ, որոնք որոշվում են տվյալ լեզվի հնչույթների հնարավոր քանակով ու դրանց տարբերություններով:

դ) Հնչյունները հանդես են գալիս ոչ միայն որպես արտաբերական հատկանիշների հակադրություններով բնորոշվող հարացույցի տարրեր, այլև որ-

պես հնչաշղթայի նվազագույն (տվյալ լեզվական հանրության անդամների կողմից իբրև մեկ ամբողջություն հանգես եկող անբաժանելի) բաղադրիչներ, այսինքն՝ շարակարգի տարրեր։ Հնչաշղթայի, որպես ավարտուն շարակարգի, բաղադրիչների հարաբերությունը կարելի է դիտել որպես ծավալային կամ ներառական հարաբերություն, որտեղ յուրաքանչյուր բարձրակարգ միավոր բաղկացած է ստորակարգ մեկ կամ ավելի միավորից։ Ըստ այսմ մենք պետք է ունենանք «հնչյուն $\subseteq$ վանկ $\subseteq$ հնչաբառ $\subseteq$ հնչաշարույթ (հնչատակտ) $\subseteq$ հնչադասություն $\subseteq$... հնչաշղթա (ավարտուն հնչախոսք)» կադապարային բանաձևը, որտեղ բաղմությունների տեսությունից առնված $\subseteq$ նշանը արտահայտում է ներառական հարաբերություն՝ յուրաքանչյուր հաջորդ միավորի բաղկացություն նախորդ մեկ կամ ավելի միավորից, այսինքն՝ վանկը կարող է բաղկացած լինել մեկ կամ մեկից ավելի հնչյունից, հնչաբառը՝ մեկ կամ մեկից ավելի վանկից և այլն. հակառակ հարաբերությունը նկատի ունենալու դեպքում կարելի է ասել, որ հնչյունը կարող է հանդես գալ որպես վանկ կամ մըտնել վանկի կազմի մեջ, վանկը կարող է հանդես գալ որպես հնչաբառ կամ մտնել հնչաբառի կազմի մեջ և այլն. իհարկե, այս դեպքում, ինչպես կտեսնենք, կան դրսևորման տարբերություններ ու սահմանափակումներ, որոնք կամ ընդհանրական բնույթ ունեն, կամ հատուկ են միայն տվյալ լեզվի ու լեզուների տվյալ տիպին. ոչ բոլոր ստորակարգ միավորները հավասարապես կարող են միայնակ հանդես գալ որպես բարձրակարգ միավորներ և հավասար արժեք ունենալ ու հավասար դիրք գրավել նրանց կազմում։ Այս կապակցությամբ հարկավոր է պարզել, ըստ մեր անմիջական նպատակների, հնչյունի (resp. հնչույթի) տեղն ու դերը շարակարգի մեջ, որոշել նրա հարաբերությունը մի կողմից՝ իր բաղադրիչ տարրերին և մյուս կողմից՝ որպես բաղադրիչ տարր՝ վանկին, այլ կերպ ասած՝ հնչյունի բաղկացականությունը և ներառելիությունը։ Հայտնի է, որ հնչյունը գոյանում է (resp. բաղկացած է) մեկ կամ ավելի արտաբերական շարժումների գումարից, որոնք կարող են հանդես գալ միաժամանակ կամ հաջորդաբար. սակայն լեզվական առումով դրանք ընկալվում են որպես մեկ միասնություն և չեն կարող, նույնիսկ հաջորդման դեպքում, դիտվել որպես ինքնուրույն որակներ, ճիշտ այնպես, ինչպես մարդը հասարակության նվազագույն միավոր է և, որպես օրգանիզմ, կենսաբանական մեկ ամբողջություն, թեև բաղկացած է գործառական տարբեր մասերից։ Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ հնչույթի տարածված սահմանումը որպես հատկանիշների գումարի (փնջի) հիմնված է տրամաբանական սխալի՝ հասկացության բովանդակության և ծավալի շփոթման վրա. հատկանիշները պատկանում են բովանդակությանը, հնչույթը կարող է բերնութագրվել նրանցով, տարբերվել մյուս հնչույթներից, բայց ոչ բաղկանալ նրանցից. հնչույթը, ինչպես նշեցինք, գոյանում է արտասանական օրգանների արտաբերական շարժումներից, և, որոշ վերապահությամբ, կարելի է ասել, որ բաղկացած է դրանցից (ավելի ճիշտ՝ արդյունք է օդի հոսանքի՝ այդ շարժումների հետևանքով ձևափոխվելու). այդ շարժումներն էլ կարող են բնութագրել տվյալ հնչյունը (հնչույթը) կամ տվյալ հնչյունակարգը (հնչութակարգը)՝ ի տարբերություն (ի հակադրություն) այլ հնչյունների (հնչութների) կամ հնչյունակարգերի (հնչութակարգերի). այստեղից բխում է, որ նրանք կարող են դառնալ հնչյուններ (հնչութներ) և նրանց կարգերը (խմբերը) տարբերող հատկանիշներ, բայց թույլ է տրվում ակնհայտ տերմինալին վրիպում, երբ խոսվում է հնչույթի՝ տարբերակիչ հատկանիշներից բաղկանալու մասին. կենդանին կարող է պոչ ունենալ (բաղկանալ, ի թիվս այլ մասերի, պոչից) և, այսպիսով, բնութագրվել պոչափոքության հատկանիշով, բայց չի կարելի ասել, թե նա բաղկացած է պոչավորության հատկանիշից։ Այժմ մի քանի խոսք հնչյունի (հնչույթի) ներառելիության, վանկի նկատմամբ նրա ունեցած հարաբերության մասին։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում շեշտել երկու հանգամանք. առաջին՝ վանկը կարող է բաղկացած լինել մեկ հնչյունից (հնչութից) միայն վանկարար հնչյունների (հատկապես ձայնավորների) դեպքում. այլ կերպ ասած՝ գոյություն ունի «հնչյուն-վանկ» հարաբե-

րության իրացման սահմանափակություն, որ հատուկ է բոլոր լեզուներին որպես հանրութիւն. վիճակը մոտավորապես նույնն է, ինչ «ձեռքի թափ» հարաբերության դեպքում, այսինքն՝ բառը կարող է բաղկացած լինել մեկ ձեռքից, բայց միայն որոշ (արմատական) տիպերի դեպքում. այստեղից, բնականաբար, բխում է, որ արտասանվածքի՝ բովանդակությունից անկախ վերլուծության ժամանակ հնչյութին, և բովանդակային վերլուծության ժամանակ ձեռքին հասնելը շարակարգային առումով պայմանական է, այսինքն՝ շատ հնչյուններ և ձեռքներ գուրկ են շարակարգային ինքնուրույնությունից և շարակարգի մեջ են մտնում միայն վանկի և բառի միջոցով, հանդես գալիս որպես դրանց տարբերիչներ: Երկրորդ՝ եթե շարակարգի և շարակարգայնության հատկանիշ համարենք գործածության ինքնուրույնություն ունեցող միավորներից բաղկանալու կարողությունը, ապա շարակարգային նվազագույն միավորներ կարող են դիտվել, համապատասխանաբար, վանկը և շարութիւնը, Հնչյունը և բառը կարող են դիտվել որպես համապատասխան հարացույցների նվազագույն միավորներ:

Ե) Ինչպես հայտնի է, «շարահայտություն» անվանումը երկիմաստ է. այն մասամբ դիտվում է որպես նախադասության, մասամբ՝ որպես շարակարգի ուսմունք: Մինչդեռ սրանք տարբեր բաներ են. առաջին դեպքում նկատի է առնվում ստորոգման հատկանիշը, որ կարող է հանդես գալ և՛ բառի, և՛ շարութիւնի (այդ թվում բառակապակցության), և՛ շարութիւնների կապակցության դեպքում: Եթե մենք ստորոգման հատկանիշը փոխարինենք նրա արտաքին դրսևորումը արտահայտող ավարտվածության և անկախ գործածականության հատկանիշներով, ապա կարելի է անալոգիա անցկացնել շարահայտության և հնչաբանության միջև՝ տարբերակելով բուն շարակարգի ուսմունքը այդ շարակարգի առանձին միավորների (վանկերի, հնչաբառերի, հնչաշարութիւնների և այլն) ինքնուրույն գործածականության ուսմունքից և հատուկ բաժին հատկացնել ինքնուրույն գործածականության (վերջին հաշվով՝ ստորոգման) արտահայտման հնչական միջոցների քննությանը:

զ) Հնչական կողմը որպես լեզվի արտահայտության պլանի դրսևորում գոյություն ունի այն չափով, որչափով այդ պահանջում է բովանդակության պլանը: Հասկանալի է, որ հնչական միավորների տարբեր համակցությունները (կոմբինացիաները) պայմանավորված են լեզվի իմաստակիր միավորների, հատկապես ձեռքների և բառերի, համակցման (կոմբինավորման) տարբերություններով: Այստեղ, բնականաբար, հնարավոր են այնպիսի համակցություններ, որոնք պահանջում են համապատասխանեցում տվյալ լեզվի արտասանական սովորութիւններին, և հանդես է գալիս հնչական շղթայի մեջ հնչյունների, վանկերի, հնչաբառերի և նույնիսկ ավելի մեծ միավորների կրած փոփոխությունների օրինակափոխությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այստեղ է, որ հնչական կաղապարների որոշման հետ միասին անհրաժեշտ է դառնում դրանց փոխկաղապարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Այսպիսով, փոխկաղապարման մեր ուսմունքը, ներքին և արտաքին փոխկաղապարման հասկացություններով հանդերձ, շատ բան կարող է տալ հնչյունական հերթագայության, սանդհիի և այլ երևութիւնների ուսումնասիրության համար:

է) Վերջապես, խոսենք հայ լեզվաբանության մեջ տեղմինային մի ճշմարտան հանրաժեշտության մասին: Գ. Ղափանցյանից սկսած լեզվաբանության այն բաժինը, որ զբաղվում է լեզվի հնչական կազմի ուսումնասիրությամբ, մեզ մոտ ընդունված է կոչել «հնչյունաբանություն»: Գ. Ղափանցյանն այս տեղմինը հիմնավորում էր նրանով, որ այստեղ տրվում է «կոնկրետ հնչյունի ուսումնասիրությունը, այդ հնչյունի ուսմունքը», այլև «հնչյունի պատմական կյանքը, նրա պատմական փոփոխությունները»: Արդի պայմաններում տեղմինը կորցրել է իր գիտական հիմքը. նախ՝ հնչյունն այստեղ քննվում է ոչ միայն որպես հարացույցի տարր, այլև որպես շարակարգի բաղադրիչ, ընդ

որում ուսումնասիրության ինքնուրույն առարկա են հենց նաև շարակարգային այնպիսի միավորները, ինչպիսիք են վանկը, հնչաբառը, հնչաշարույթը (հնչատակսը) և այլն. երկրորդ՝ սրանց հետ միասին և սրանց հետ կապված ուսումնասիրության առարկա են դառնում «վերահատույթային» կոչվող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են շեշտը, հնչերանգը, դադարը և այլն: Հենց ինքը Գ. Ղափանցյանը, մտցնելով արտասանական վերլուծության սկզբունքը, սկսում է «հնչյունական շղթայից», առանձնացնում նրա մեջ «շեշտավոր կրտորներ», անցնում վանկերին և հասնում հնչյուններին, այսինքն՝ փաստորեն քննության ելակետ է դարձնում «հնչյունական շղթան» և սրանով իսկ խախտում «հնչյունաբանություն» տերմինի ներմուծման հիմքերը: Այս է պատճառը, որ «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներում» մենք վերադարձել ենք «հնչաբանություն» տերմինին: Ավելի անհաջող են «ձայնախոսություն», «ձայնաբանություն», «ձայնագիտություն» անվանումները, որոնց մեջ հիմք ընդունված «ձայն» բառը ավելի նեղ իմաստ տւնի՝ հակադրվելով աղմուկին⁹:

5. Կաղապարման մեր ուսմունքը լեզվի նկարագրության մեջ հիմք է ընդունում տնտեսման սկզբունքը, որ ժամանակին առաջ է քաշվել գլոսեմաստիկայի դպրոցի կողմից, բայց մեր աշխատություններում ստացել է քանակական-մեթոդականական ոլորտի արտահայտություն և համապատասխան հարաբերության մեջ դրվել ինֆորմացիայի տեսության սկզբունքների հետ: Այստեղ նկատի է առնվում, որ լեզվին ներքնապես հատուկ է խնայողության ու տնտեսման սկզբունքը, և որ նկարագրության մեջ տնտեսման սկզբունքի հետևողական կիրառումը հնարավորություն է տալիս խուսափել հավելուրդայնությունից: Լեզվական միավորները, այդ թվում նաև հնչյունները, առանձնացվում և նկարագրվում են որոշակի հատկանիշների (այդ բառի այն առումով՝ նկատի ունենալով նաև կարգերն ու եզրերը) հիման վրա: Սակայն հատկանիշների և նրանցով նկարագրվող միավորների միջև առկա է որոշակի մաթեմատիկական կախում. ընդհանուր առմամբ հատկանիշների ը քանակով կարելի է տարբերակել (հակադրել, նկարագրել) շⁿ քանակի միավորներ, այսինքն՝ մեկ հատկանիշով՝ երկու, երկու հատկանիշով՝ չորս, երեք հատկանիշով՝ ութ միավոր և այլն: Այս իդեալական տնտեսումը հնարավոր է միայն ընդհանրական իդեալական կաղապարի դեպքում: Ինչ վերաբերում է առանձին լեզուներին, ապա դրանց հնչույթներն ամբողջովին առնված, որպես պատմականորեն կազմավորված համակարգեր՝ անդամների սահմանափակ թվով՝ շատ հեռու են իդեալական կաղապարում հնարավոր բոլոր տիպերի օգտագործումից: Եթե մենք գործ չունենք հատուկ տիպաբանական քննության հետ, երբ տվյալ լեզուն անհրաժեշտ է համեմատության մեջ դնել ինչպես իդեալական կաղապարի, այնպես էլ այլ լեզուների կաղապարների հետ, այսինքն՝ եթե տվյալ լեզուն առնվում է ինքնին, որպես քննության ինքնուրույն առարկա, ապա հարկավոր է նույնպես հետևողականորեն կիրառել տնտեսման սկզբունքը, գտնել հատկանիշների այն նվազագույն քանակը, որի օգնությամբ հնարավոր է նկարագրել բոլոր հնչույթները, այլ կերպ ասած՝ որոշել հնչույթային տվյալ համակարգի հակադրությունների նվազագույն քանակը: Ցավոք, այս սկզբունքը գրեթե չի կիրառվում հայերենի (և ոչ միայն հայերենի) հնչույթային համակարգերի նկարագրության ժամանակ. հնչույթների նրկարագրության համար ընտրված հատկանիշների քանակը առանձին դեպքերում հասնում է հնչույթների քանակին (ամեն մի հնչույթ բնորոշվել է մեկ հատկանիշով), այսինքն՝ թույլ է տրվում հավելուրդայնության գերազույն աստիճան:

Տնտեսման սկզբունքի հաշվառմամբ են կազմվում մեր աղյուսակները և սխեմաները: Ընդհանրական լեզվաբանական կաղապարը որպես իդեալական կառույց ձգտում է հատկանիշների ու կարգերի և միավորների ու դրանց վերադրվող քննութագրերի (կարգերի ու եզրերի) փոխհարաբերությունը կառուցել

⁹ Հմմտ. Գ. Ղափանցյանի դիտողությունն «ձայնախոսություն» անվանման մասին. նշվ. աշխ., 43-րդ էջի ծանոթություն:

մաթեմատիկական հիշյալ փոխհարաբերություններ՝ Π -ի դիմաց 2° :

Աղյուսակների դեպքում կարգերին վերագրվող հատկանիշների և միավորների վերագրվող բնութագրերի (կարգերի ու եղբերի), այսինքն՝ տվյալ միավորներին տվյալ հատկանիշների (բնութագրերի) հատուկ լինելը կամ չլինելը արտահայտող պլյուսների և մինուսների բաշխումը կատարվում է ըստ նյութի բերանդամի բանաձևի: Եթե հատկանիշներից և հատկանշյալներից կամ բնութագրիներից ու բնութագրյալներից առաջինները նշանակենք փոքրատառերով՝ a, b, c, d..., երկրորդները՝ մեծատառերով՝ A, B, C, D..., ապա մենկ միավորով տարբերակվող երկու միավորի (1), երկու հատկանիշով տարբերակվող շորս միավորների (2) և երեք հատկանիշով տարբերակվող ութ միավորների (3) փոխհարաբերությունները կարտահայտվեն հետևյալ աղյուսակներով:

Աղյուսակ 1

	A	B
a	+	—

Աղյուսակ 2

	A	B	C	D
a	+	+	—	—
b	+	—	+	—


Աղյուսակ 3

	A	B	C	D	E	F	G	H
a	+	+	+	+	—	—	—	—
b	+	+	—	—	+	+	—	—
c	+	—	+	—	+	—	+	—


Առանձին լեզուների համար կազմված աղյուսակներում տնտեսման սկզբունքի կիրառման դեպքում բաց վանդակներն ըստ հնարավորին պետք է նվազագույնի հասցվեն, այսինքն՝ ընտրվեն ըստ հնարավորին քիչ հատկանիշների: Հայերենի 36 հնչույթի համար լավագույնը կլինի հատկանիշների 6 թիվը (5 հատկանիշով կարելի է տարբերակել 32 միավորից ոչ ավելի), բայց իրականում հնարավոր չէ հասնել այդպիսի իդեալական նկարագրության՝ մասամբ հնչույթների կազմավորման, մասամբ մեր լեզվի առանձնահատկությունների պատճառով:

Եթե մենք միավորների (տվյալ դեպքում հնչյունների) փոխհարաբերությունն արտահայտենք գծագրերով և հատկապես գրաֆներով՝ պահպանելով տնտեսման միևնույն սկզբունքը, ապա միավորները որպես կետեր և բնութագրերը՝ որպես դրանք միացնող գծեր ներկայացնելու դեպքում կունենանք հետևյալ գծագրերը:


Գծագիր 1



Գծագիր 2




Գծագիր 3




Հասկանալի է, որ հատկանիշների՝ երեքից շատ լինելու դեպքում մենք կունենանք բաղմաշափ գծագրեր, և կրարգանա դրանց արտահայտումը: Այդ պատճառով էլ կարելի է դիմել կախումների ծառի տիպի գրաֆի, սակայն նրա կատի առնել, որ այս դեպքում փոխվում են նշանակման սկզբունքները՝ հատկանիշները նշանակվում են վերևի կետերում, միավորները՝ հիմքային կետերում, ընդ որում կարող են փոխվել հատկանիշների տեղերը՝ միավորների համապատասխան տեղափոխությամբ. այլ կերպ ասած՝ միավորների արտաքին մերձավորությունը և հեռավորությունը իրար նկատմամբ կախված է հատկանիշների դասավորությունից, թեև ընդհանուր հարաբերակցությունը չի փոխվում. այդպես է նաև համապատասխան աղյուսակների դեպքում: Հասկանալի է, որ կախումների սովորական ծառի վերարձակ պատկերացումներից այստեղ պետք է հեռանալ և հիշել, որ հորիզոնական գծի վրա գտնվող հատկանիշները նույնական են, և որ այս նույնը վերաբերում է համապատասխան աղյուսակներին: Ահավաստի երկու հատկանիշով տարբերակվող չորս միավորի արտահայտումը կախումների ծառի ձևով՝ հատկանիշների և ոչ եզրային միավորների տեղափոխությամբ հանդերձ (ծառը չի ձևափոխվում, այլ փոխվում են նշանակումների առկայությունը):

Գծագիր 1



Գծագիր 2



Աղյուսակ 9

	A	B	C	D
a	+	+	-	-
b	+	-	+	-

Աղյուսակ 10

	A	B	C	D
b	+	+	-	-
a	+	-	+	-

Տեսեաժման սկզբունքով կառուցված հատկանիշների և միավորների փոխհարաբերությունը ճիշտ կարտահայտեր մի գծագիր, որտեղ ամեն մի հատկանիշի ավելացմամբ կկրկնապատկվեր նկարագրվող միավորների թիվը՝ n հատկանիշի դիմաց 2ⁿ միավոր:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОБЩЕЙ И АРМЯНСКОЙ ФОНОЛОГИИ

ГЕВОРК ДЖАУКЯН
Академик АН Арм. ССР

Резюме

Все разновидности понимания сущности фонемы нами сводятся к различным ответам на два взаимосвязанных основных вопроса: 1) для выделения фонем следует основываться на лингвистических («функциональных») или экстралингвистических (физико-физиологи-

ческих) критериях? 2) фонемы следует рассматривать как материально-физические или идеальные психическо-понятийные сущности? Развиваемое нами монистическое учение лингвистического моделирования исходит из следующих основных принципов при ответе на эти и другие вопросы общей и армянской фонологии. 1) В этом учении строго различаются общелингвистическая точка зрения от отдельнولينгвистической и в их пределах—инвариантная от вариативной; общая фонология не что иное, как раздел общей вариативной лингвистики (общей лингвистической типологии), а фонология отдельного языка—раздел отдельной инвариантной лингвистики. 2) В отличие от структурной лингвистики это учение последовательно проводит субстанциональную точку зрения, т. е. считает, что сущность языка можно понимать лишь выходя из языковой системы; следовательно, оно исходит из первичности материально-субстанциональной сущности фонемы, одновременно указывая на то, что в данной языковой общности она приобретает социальную значимость и играет социальную роль: фонема—это компонент физической стороны языка, по действующей в данном языковом коллективе норме воспринимаемая как отличная от других линейно неразложимая единица. 3) Вместо сосюровского противопоставления лингвистики языка лингвистике речи, монистическое учение моделирования выдвигает противопоставление инвариантной лингвистики вариативной, относя изучение всех разновидностей фонем, в том числе позиционных и стилистических, к отдельной вариативной лингвистике. Одновременно оно считает, что фонему как общественно выделяемую единицу можно противопоставить звуку как конкретной реализации только через индивидуально воспринимаемую единицу—идиофонему. 4) Монистическое учение моделирования ко всем уровням языка, в том числе к звуковому, как при анализе, так и при синтезе («порождении») применяет одни и те же признаки, категории и термы, выделенные в нашей универсальной лингвистической модели. 5) При описании языкового строя, в том числе фонемной системы, монистическое учение моделирования последовательно проводит принцип экономии в его строго математическом выражении.